ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 29.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/41

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Տրանզիտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ քաղաքացի Էմիլ Չատինյանի կողմից 15.03.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Տրանզիտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ քաղաքացի Էմիլ Չատինյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Տրանզիտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ քաղաքացի Էմիլ Չատինյանը (այսուհետ՝ նաև բողոքաբեր) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 15.03.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի փաստական հիմքերը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար շինարարական սեպավոր փայտամածերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է գնման ընթացակարգ:

ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18 ծածկագրով գնման ընթացակարգին էլեկտրոնային եղանակով մասնակցության հայտ են ներկայացրել «Էյչ գրուպ» ՍՊԸ-ն, որը մասնակցել է կոնսորցիումով «ՌոսՍերվիս»ՍՊԸ-ի հետ, և «Տրանզիտ»ՍՊԸ-ն:

Մասնակիցները մրցույթի հայտի հետ միասին՝ ի թիվս այլ փաստաթղթերի ներկայացրել են նաև թիվ 5 հավելվածը (գնային առաջարկ), որում նշվել է ապրանքի անվանումը, չափաբաժինների համարները և առաջարկվող ապրանքների գներն՝ ըստ չափաբաժինների:

2018թ. մարտի 7-ին ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 3 արձանագրությունը: Նշված արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասով «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի, որը մասնակցել է կոնսորցիումով «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի հետ, հայտը գնահատվել է անբավարար, այն պատճառաբանությամբ, որ հայտում առկա չէ հրավերով պահանջվող Հավելված 2-ը, որով մասնակիցը տալիս է հայտարարություն մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին: Իսկ «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար:

Նույն արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասով «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի, որը մասնակցել է կոնսորցիումով «ՌոսՍերվիս»ՍՊԸ-ի հետ, հայտը գնահատվել է անբավարար, այն պատճառաբանությամբ, որ Հավելված 1-ում նշված չէ, թե որ երկրի ռեզիդենտ է «ՌոսՍերվիս»ՍՊԸ-ն, ինչպես նաև վերջինիս էլ. փոստի հասցեն: Իսկ «Տրանզիտ»ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար:

Գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջները, որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով մասնակցին շտկելու հայտում տեղ գտած անհապատասխանությունները:

13.03.2018թ. գնահատող հանձնաժողովի կողմից կազմվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությունը: Վերը նշված արձանագրության 7-րդ կետով «Էյչ գրուպ» ՍՊԸ-ն և «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ն (կոնսորցիում) 1-ին չափաբաժնի համար հայտարարվել են առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

13.03.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է թիվ 2 չափաբաժնի մասով մասնակիցներին՝ «Էյչ գրուպ» ՍՊԸ-ին և «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ին (կոնսորցիում) ու «Տրանզիտ» ՍՊԸ-ին հրավիրել առաջարկված գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցությունների:

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնման առարկա է հանդիսացել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ շինարարական սեպավոր փայտամածերի ձեռքբերումը, որոնք խմբավորված են «2» չափաբաժիններում՝

1. Շինարարական սեպավոր փայտամած ԼՍԿ-50 (ЛСК-50).

2. Շինարարական սեպավոր փայտամած:

Թիվ 5 Հավելվածով՝ գնային առաջարկով, «Էյչ գրուպ» ՍՊԸ-ն և «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ն (կոնսորցիում) առաջարկել են 1-ին չափաբաժնի համար (Շինարարական սեպավոր փայտամած)՝ 63,870,000 ՀՀ դրամ ընդհանուր գին, իսկ 2-րդ չափաբաժնի համար (Շինարարական սեպավոր փայտամած)՝ 5,400,000 ՀՀ դրամ ընդհանուր գին:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի... որոշումները:

Համաձայն նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Վերը նշված հոդվածների տառացի մեկնաբանությունից և համակարգային վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր ոք, այդ թվում նաև «Տրանզիտ» ՍՊԸ-ն, իրավունք ունի գնահատող հանձնաժողովի որոշումները բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդին:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. մասնակից՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձ:

Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Սույն գործով, որպես մասնակիցներ մասնակցել են

1.«Էյչ գրուպ» ՍՊԸ-ն, որը մասնակցել է կոնսորցիումով «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի հետ,

2.«Տրանզիտ» ՍՊԸ-ն:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. գնման առարկա՝ գնվող ապրանքը, ...:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի՝ մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների:

Համաձայն Հրավերի 1.1 կետի՝ գնման առարկա է հանդիսանում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ շինարարական սեպավոր փայտամածերի ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «2» չափաբաժիններում՝ ըստ չափաբաժինների համարների և չափաբաժնի անվանման.

1-ին չափաբաժին՝ Շինարարական սեպավոր փայտամած ԼՍԿ-50 (ЛСК-50)

2-րդ չափաբաժին՝ Շինարարական սեպավոր փայտամած:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի՝ հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ...

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Տվյալ դեպքում «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի և «ՌոսՍերվիս»ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը իր մեջ ներառել է նաև գնային առաջարկ: Թիվ 5 Հավելվածում՝ Գնային առաջարկում, «Էյչ գրուպ» ՍՊԸ և «ՌոսՍերվիս»ՍՊԸ կոնսորցիումը առաջարկել է 1-ին չափաբաժնի համար (Շինարարական սեպավոր փայտամած)՝ 63,870,000 ՀՀ դրամ ընդհանուր գին, իսկ 2-րդ չափաբաժնի համար (Շինարարական սեպավոր փայտամած)՝ 5,400,000 ՀՀ դրամ ընդհանուր գին:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, ...:

Տվյալ դեպքում վերոգրյալից հետևում է, որ «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի ու «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի գնային առաջարկը կազմվել է Հրավերի 1.1 կետի պահանջների խախտմամբ, քանի որ «Էյչ գրուպ» ՍՊԸ-ն ու «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ն կա՛մ թվով 2 գնման առարկաները խմբավորել են մեկ չափաբաժնում, ինչը անթույլատրելի է, կամ թիվ 1 չափաբաժնի անվանումը դաշտում «Շինարարական սեպավոր փայտամած ԼՍԿ-50 (ЛСК-50)» անվանման փոխարեն նշել են «Շինարարական սեպավոր փայտամած», ինչը նույնպես անթույլատրելի է:

Համաձայն Հրավերի 8.20 կետի՝ հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Համաձայն Հրավերի 8.2 կետի՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում, հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Համաձայն իրավահարաբերության պահին գործող ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետ դիտարկումից հետևում է, որ հանձնաժողովը պարտավոր էր մերժել այն բոլոր հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան՝ ըստ չափաբաժինների: Այլ կերպ ասած, գործադիրը հստակ մատնանշել է, որ եթե գնային առաջարկը լրացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա առանց բացառության, հայտը ենթակա է մերժման:

Տվյալ դեպքում վերը նշված իրավական վերլուծության լույսի ներքո դիտարկելով «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի ու «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը, հետևում է, որ այն՝ 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել է հրավերի պահանջներին անհապատասխան, (5-րդ հավելվածի գնային առաջարում սխալ է նշվել թիվ 1 չափաբաժնի անվանումը), ինչն էլ հիմք էր որպեսզի գնահատող հանձնաժողովը հայտերի բացման ժամանակ մերժեր 1-ին չափաբաժնի մասով «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի ու «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը, այնինչ գնահատող հանձնաժողովը ոչ միայն չի մերժել հայտը, այլ նաև «Էյչ գրուպ» ՍՊԸ-ին ու «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ին կոնսորցիումին 1-ին չափաբաժնի մասով ճանաչել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ 09.10.2017թ. ՀՀ ֆինանսների նախարարությունը կայացրել է «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, որում նշել է՝ Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հրավերով մասնակցին տեղեկություն ներկայացնելու պայման սահմանվելու դեպքում միաժամանակ ներկայացվում են այդ տեղեկության վավերապայմանները, իսկ 33-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին: Կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների: Վերոգրյալով պայմանավորված՝ տվյալ դեպքում մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում վավերապայման է հանդիսանում գնման առարկայի անվանումը և եթե գնային առաջարկում չափաբաժնի համարն ու գնման առարկայի անվանումը չեն համապատասխանում միմյանց, ապա տվյալ դեպքում անհրաժեշտ է հիմք ընդունել գնման առարկայի անվանումը և շարունակել գործընթացը:

Այսինքն, ՀՀ ֆինանսների նախարարությունը հստակ դիրքորոշում է հայտնել, որ գնային առաջարկում վավերապայման է հանդիսանում գնման առարկայի անվանումը, հետևաբար, գնման առարկայի անվանման ցանկացած խախտում հանգեցնում է թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հրավերի պահանջների անհամապատասխանության:

Վերոգրյալից հետևում է, որ պետք է մերժվեր «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի ու «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը, որը սակայն չի կատարվել, ինչն էլ հանգեցրել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար շինարարական սեպավոր փայտամածերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2018 թվականի մարտի 13-ի թիվ 4 արձանագրության 7-րդ կետով նախատեսված որոշման անվավերության:

Անհրաժեշտ եմ համարում նշել նաև, որ համաձայն ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Սույն գործով վիճարկվող թիվ 4 արձանագրության մեջ որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Էյչ գրուպ» ՍՊԸ ու «ՌոսՍերվիս» ՍՊԸ կոնսորցիումը, իսկ հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Տրանզիտ» ՍՊԸ-ն:

Տվյալ դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի ու «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի հայտը 1-ին չափաբաժնի մասով ենթակա է մերժման, ուստի որպես 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է հանդիսանում «Տրանզիտ» ՍՊԸ-ն:

Համաձայն ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը,.... առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

Վերը նշված նորմի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ եթե գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը, ապա առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ:

Տվյալ դեպքում հաշվի առնելով որպես մասնակից, ում կողմից ներկայացված հայտը համարվել է 1-ին չափաբաժնի մասով բավարար, հանդիսանում է միայն «Տրանզիտ» ՍՊԸ-ն, ուստի գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովին պետք է պարտավորեցնել «Տրանզիտ» ՍՊԸ-ի հետ 1-ին չափաբաժնով առաջարկված գների նվազման շուրջ վարել բանակցություններ և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ մասի «գ» ենթակետի ուժով ծանուցել բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ամփոփելով սույն բողոքը նշեմ նաև, որ գնահատող հանձնաժողովի կողմից անօրինական որոշման հետևանքով խախտվել է բողոքաբերի հավասարության պայմաններում մասնակցության իրավունքը, խաթարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի

նպատակը («Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված), հայտի մերժման հիմքերի առկայության պարագայում չի մերժվել «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի և «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի հայտը, գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին ծանուցում չի ուղարկվել բողոքաբերին, ինչի հետևանքով խախտվել է նաև սույն բողոքում նշված իրավական նորմերի պահանջները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ բերված բողոքների քննումն իրականացնում է գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Խորհուրդը անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Խորհրդի անդամները բողոքներն ուսումնասիրում են պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Խորհրդի անդամները սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ են գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր են բացառապես ղեկավարվել օրենքով և կիրառել այն:

Տվյալ դեպքում հիմք ընդունելով այն հանգամանքը, որ խորհուրդը անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որ շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից, իր լիազորությունները իրականցնելիս ղեկավարվում է բացառապես օրենքով և կիրառում է այն, հուսով եմ, որ սույն գործին կտրվի արդարացի լուծում, քանի որ ինչպես «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ, այնպես էլ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանմամբ հստակ դիրքորոշում է հայտնվել, որ եթե գնային առաջարկը լրացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, այլ կերպ ասած, եթե գնային առաջարկի վավերապայման հանդիսացող գնման առարկայի անվանումը սխալ է լրացվել, ապա միանշանակ է, որ հայտը ենթակա է մերժման:

Բողոքի պահանջը.

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Խորհուրդն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ...

գ. փոփոխելու ընդունված որոշումները»:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը՝ Բողոքաբերը խնդրել է.

1. Անվավեր ճանաչել 14.03.2018թ. գնահատող հանձնաժողովի կողմից կազմված և հրապարակված ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 7-րդ կետով ընդունված որոշումը:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ»ՓԲԸ-ին «Տրանզիտ» ՍՊԸ-ի հետ 1-ին չափաբաժնի մասով վարել գների նվազեցման շուրջ բանակցություններ և այդ նպատակով «Տրանզիտ» ՍՊԸ-ին ծանուցել բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Տրանզիտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ քաղաքացի Էմիլ Չատինյանը:

2. «<u>ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 17.03.2018թ. թիվ 609 գրությամբ «Տրանզիտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ քաղաքացի Էմիլ Չատինյանի կողմից 15.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 28-ը փետրվարի 2018 թ. հրապարակել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18» ծածկագրով ընթացակարգ, որով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ձեռք են բերվելու շինարարական սեպավոր փայտամածեր, որոնք խմբավորված են երկու չափաբաժիններում: Հայտերի բացման և գնահատման նիստը տեղի է ունեցել 2018թ. մարտի 7-ին, որի արդյունքներով կազմվել է գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը: «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18» ծածկագրով ընթացակարգին հրավերով սահմանված ժամկետում http/www.armeps.am էլեկտրոնային կայքում բեռնվել են 2 հայտ: Մասնակցության հայտ են ներկայացրել «Տրանզիտ» ՍՊԸ-ն և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, որը մասնակցել է կոնսորցիումով

«ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի հետ (այսուհետ՝ Կոնսորցիում): Հայտերի բացման նիստում Կոնսորցիումի հայտը գնահատվել է անբավարար՝ հայտում տեղ գտած անհամապատասխանությունների պատճառով, քանի որ Հավելված 1-ում նշված չէր թե, որ երկրի ռեզիդենտ է «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ն, ինչպես նաև նշված չէր վերջինիս էլեկտրոնային փոստի հասցեն և հայտում առկա չէր հրավերով պահանջվող Հավելված 2-ը, որով մասնակիցը տալիս է հայտարարություն մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին: Գնահատող հանձնաժողովը՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ որոշման 41-րդ կետի պահանջներով՝ նիստը կասեցրել է մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով Կոնսորցիումին շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը: «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

12.03.2018թ. Կոնսորցիումի կողմից գնահատող հանձնաժողովի քարտուղար Ն.Հակոբյանի էլեկտրոնային փոստին է ուղարկել շտկված Հավելված 1-ը և լրացված Հավելված 2-ը: Կասեցված նիստը վերսկսվել է մարտի 13-ին և գնահատող հանձնաժողովը Կոնսորցիումի ներկայացրած շտկված հավելվածները և հայտը գնահատել է բավարար:

Մասնակիցները տվել են հետևյալ գնային առաջարկները.

Չափա-բաժնի համարը	Ապրանքի անվանումը	Նախահաշվա-յին գին /ներառյալ ԱԱՀ/	<<Էյչ Գրուպ>> ՍՊԸ և <<ՌոսՍերվիս>> ՍՊԸ		<<ՏՐԱՆԶԻՏ>> ՍՊԸ	
			Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	Շինարարական սեպավոր փայտամած	64.380.000	53.225.000	63.870.000	82.000.000	ԱԱՀ վճարող չէ
2	Շինարարական սեպավոր փայտամած	5.180.000	4.500.000	5.400.000	5.000.000	ԱԱՀ վճարող չէ

Քանի որ Կոնսորցիումի գնային առաջարկը թիվ 1 չափաբաժնով ցածր էր նախահաշվային գնից, իսկ «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցում էր այն, ուստի գնահատող հանձնաժողովը թիվ 1 չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչեց Կոնսորցիումին:

Բողոքաբեր անձի կողմից որպես իրավական հիմք և հիմնավորում նշվել է, որ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորվել են մեկ չափաբաժնում, ինչը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արգելվում է: Սակայն, նույն հոդվածի 2-րդ մասի շարունակության մեջ ասվում է. «բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը»: Այս պարագայում

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18» ծածկագրով հրավերի թիվ 1 և 2 չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշվել է շինարարական սեպավոր փայտամածերի լրակազմի յուրաքանչյուր դետալի տեխնիկական բնութագիրը:

Բողոքաբեր անձը նշել է, որ «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի ու «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի գնային առաջարկը կազմվել է Հրավերի 1.1 կետի պահանջների խախտմամբ, քանի որ «Էյչ գրուպ» ՍՊԸ-ն և «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ն կա՛մ թվով 2 գնման առարկաները խմբավորվել են մեկ չափաբաժնում, ինչը անթույլատրելի է, կա՛մ թիվ 1 չափաբաժնի անվանումը դաշտում «Շինարարական սեպավոր փայտամած ԼՍԿ-50 (ЛСК-50)» անվանման փոխարեն նշել են «Շինարարական սեպավոր փայտամած», ինչը նույնպես անթույլատրելի է:

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18» ծածկագրի հրավերով ձեռք են բերվում «Շինարարական սեպավոր փայտամածեր», որոնք խմբավորված են երկու չափաբաժիններում: Բողոքաբերի դիտողությունը առ այն, որ թվով 2 գնման առարկաները խմբավորված են մեկ չափաբաժնում՝ անհասկանալի է: «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի ներկայացրած գնային առաջարկում թիվ 1 չափաբաժնով ձեռքբերվող ապրանքի «Շինարարական սեպավոր փայտամած» անվանման շարունակություն «ԼՍԿ-50 (ЛСК-50)» (փայտամածի մոդելն է) բառերը չնշելը էական նշանակություն չունեցող բացթողում է, քանի որ հրավերի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագրում հստակ նշված է պահանջվող շինարարական սեպավոր փայտամածի մոդելը:

Բողոքն անհիմն է և ենթակա չէ բավարարման:

Խնդրում եմ հաշվի առնել ձեռք բերվող ապրանքի հրատապությունը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի շահագործման գործընթացում և հնարավորության դեպքում կատարել բողոքի արագացված քննություն»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արման Դավթյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/41 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Տրանզիտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ քաղաքացի Էմիլ Չատինյանի կողմից 15.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, Բողոքի վերաբերյալ Պատվիրատուի 17.03.2018թ. թիվ 609 գրությամբ ներկայացված դիրքորոշումը, «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերը

(այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 07.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 13.03.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «Էյչ Գրուպ» ՍՊԸ և «ՌոսՍերվիս» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար շինարարական սեպավոր փայտամածերի ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկան խմբավորված է թվով 2 չափաբաժիններում՝ տարբեր տեխնիկական պարամետրերով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էյչ Գրուպ» ՍՊԸ և «ՌոսՍերվիս» ՍՊԸ կոնսորցիումը, ինչպես նաև «Տրանզիտ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 13.03.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 5-րդ կետով արձանագրել է, որ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափա-բաժնի համարը	Ապրանքի անվանումը	Նախահաշվա-յին գին /ներառյալ ԱԱՀ/	<<Էյչ Գրուպ>> ՍՊԸ և <<ՌոսՍերվիս>> ՍՊԸ		<<ՏՐԱՆԶԻՏ>> ՍՊԸ	
			Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	Շինարարական սեպավոր փայտամած «ԼՍԿ-50 (ЛСК-50)»	64.380.000	53.225.000	63.870.000	82.000.000	ԱԱՀ վճարող չէ
2	Շինարարական սեպավոր փայտամած	5.180.000	4.500.000	5.400.000	5.000.000	ԱԱՀ վճարող չէ

Նույն արձանագրության 7-րդ կետով Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էյչ Գրուպ» ՍՊԸ և «ՌոսՍերվիս» ՍՊԸ կոնսորցիումին:

Արձանագրության 8-րդ կետով արձանագրվել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ 2 չափաբաժնով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում էին նշված չափաբաժիններով գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆնանսնական հատկացումների չափը, հանձնաժողովը որոշեց համաձայն ՀՀ կառավարության թիվ 526-Ն

առ 04.05.2017թ. որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության՝ մասնակիցներին հրավիրել առաջարկված գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցությունների 16.03.2018թ.:

«Տրանզիտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ քաղաքացի Էմիլ Չատինյանը Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի ու «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված գնային առաջարկը 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել է հրավերի պահանջներին անհապատասխան, մասնավորապես, 5-րդ հավելվածի գնային առաջարկում սխալ է նշվել թիվ 1 չափաբաժնի անվանումը՝ «Շինարարական սեպավոր փայտամած «ԼՍԿ-50 (ЛСК-50)», ինչն էլ հիմք ընդունելով, և ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.10.2017թ. «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, հանձնաժողովի կողմից վերը նշված գնային առաջարկը պետք է գնահատվեր անբավարար:

Բողոքի քննության նպատակով 19.03.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց այն փաստը, որ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի ներկայացրած գնային առաջարկում թիվ 1 չափաբաժնով ձեռքբերվող ապրանքի «Շինարարական սեպավոր փայտամած» անվանման մեջ չի նշվել Հրավերով սահմանված փայտամածի մոդելը՝ «ԼՍԿ-50 (ЛСК-50)», սակայն պնդեց, որ նշված հանգամանքը էական նշանակություն չունեցող բացթողում է, քանի որ հրավերի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագրում հստակ նշված է պահանջվող շինարարական սեպավոր փայտամածի մոդելը: Միաժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչը մատնանշեց այն փաստը, որ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից առաջարկված գինը էական ցածր է Ընթացակարգի նախահաշվային գնից, ինչը նույնպես հաշվի է առնվել Հանձնաժողովի կողմից «Էյչ Գրուպ» ՍՊԸ և «ՌոսՍերվիս» ՍՊԸ կոնսորցիումին 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը կայացնելիս:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

• 32-րդ կետի 18-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Հրավերի 1.1 կետիով սահմանվել է, որ գնման առարկա է հանդիսանում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ շինարարական սեպավոր փայտամածերի ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «2» չափաբաժիններում՝ 1-ին չափաբաժին՝ Շինարարական սեպավոր փայտամած ԼՍԿ-50 (ЛСК-50), 2-րդ չափաբաժին՝ Շինարարական սեպավոր փայտամած:

Հրավերի 8.20 կետով սահմանվել է, որ հայտերի գնահատումը, համեմատումը և ընտրված մասնակցի որոշումը իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Էյչ Գրուպ» ՍՊԸ և «ՌուսՍերվիս» ՍՊԸ կոնսորցիումի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացված ընդհանուր

գնային առաջարկում «ապրանքի անվանումը» սյունյակում թեև չի նշվել Հրավերով սահմանված փայտամածի մոդելը՝ «ԼՍԿ-50 (ЛСК-50)», սակայն «Չափաբաժնի համարը» սյունյակում նշվել է չափաբաժնի համարը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հրավերի թիվ 1 չափաբաժնով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրի պարամետրերը պարունակում են պահանջվող շինարարական սեպավոր փայտամածի մոդելը (ЛСК-50):

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ և «ՌոսՍերվիս» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելով՝ գործել է իրավաչափ, քանի որ հայտերի գնահատումը, համեմատումը և ընտրված մասնակցի որոշումը իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների և տվյալ դեպքում վերջինս զրկված չի եղել այն գնահատելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տրանզիտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ քաղաքացի Էմիլ Չատինյանի կողմից 15.03.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**